դաստիարակչի եւ իբրեւ իւր հաստատական եւ մինչեւ անգամ ընտանեկան գործերում աւագնորդի հետ։

Ահա՛ ժողովրդեան այս ընտրողական իրաւունքները ի բարին չգործադրուելուն է, որ անպակաս են այժմ զանազան քաղաքներից ու գիւղերից ժողովրդական բողոքագրութիւնները եւ խնդիրները թէ առ Վեհ. Հայրապետը եւ թէ առ Ս. Սինոդը քահանայից տեղափոխութեան մասին։ Ժամանակ է անտարբերութիւնից սթափուելու եւ աչալրջութեամբ վերաբերուելու ինչպէս դէպի ամեն ազգային—եկեղեցական գործերը, նոյնպէս եւ դէպի քահանայական խնդիրները. Ինչ ժողովուրդ զգում է արժանաւոր քահանայի կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը, եւ անարժանի աւերողութիւնն ու վնասակարութիւնը, թող ինքն իւր ձեռքով պատրաստէ իւր արժանաւոր քահանայացուն։ Ոչ մի ժողովուրդ իւր արժանաւոր քահանային չի փոխիլ անարժանի հետ, մանաւանդ թէ՝ վերջինս՝ ուր որ տեղափոխուի, աւերող ու վնասակար է։

***

Մեր սիրելի Ազգայնոց խորին ուշադրութեանը հրաւիրումենք Մայր Աթոռոյս Գէորգեան Ճեմարանի Տեսուչ Պ. Արշակ Նահապետեանի Ծանուցման վերայ, որը տպուած է անցեալ Նոյեմբեր և սոյն Դեկտեմբեր ամսոց Արարատի ամսատետրերի մէջ, որով Յարգոյ Տեսուչը դիմումէ Հայ ուսումնարանաց հոգաբարձութեանց՝ ուսումնական խորհուրդների և հայ.—ազգային լուսաւորութեան ասպարիզում գործող անձանց աջակցութեանը՝ [illegible] ամենակարեւոր գործը գլուխ բերելու համար, խնդրելով նորանցից կամ ուղարկել յանուն Ճեմարանի պատրաստի ծրագիրներ և կամ յայտնել իւրեանց հայեացքները և պահանջները ազգային ուսումնարաններից.

Խմբագրութիւնս այսու կհրաւիրէ ամեն՝ հայկական ազգային լուսաւորութեան նուիրական գործով զբաղուողներին, որ ինչո՛վ և ո՛րչափ կարող է իւրաքանչիւր ոք՝ ամենայն Հայ ուսումնարանաց ծրագրներին միութիւն և բարելաւ ու նպատակայարմար ուղղութիւն տալու գործում աջակցէ Յարգոյ Տեսուչ Պ. Արշակ Նահապետեանցին և Գէորգեան Ճեմարանի ուսումնական խորհրդին, որով մեծ ծառայութիւն արած կլինին ազգային կրթութեան գործին.

***

Խմբագրութիւնս մեր սիրելի Ազգայնոց գէթ հարեւանցի կերպով Մայր Աթոռոյս Գէորգեան Ճեմարանի ուսումնական գրութեանը ծանօթացնելու համար իւր խոստման համեմատ կհրատարակէ հետագայ տեղեկութիւնները՝ այն է ամեն մի դասարանում և լսարանում իւրաքանչիւր առարկայից աւանդած դասերի քանակութիւնը՝ ուսուցչաց և պաշտօնակալաց անուններն ու նոցա ստացած ռոճիկները.

| Համար. | Ուսուցիչ | Դասարան | Լսարան | Առարկայ. | Դաս. | Ռոճիկ. Ռ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց | Ա<br>Գ | Ա. Բ. | կրօն | 10 | | |
| | | | Ա. Բ. | Ընդհ. Եկեղեց. պատմութիւն | 4 | | |
| | | | | Շաբաթական | 14 | | |
| | | | | տարեկան. | | 1000 | |
| | | | | Ամսական | | 83 | 33⅓ |
| 2 | Կիւրեղ վարդապետ Սրապեան. | Գ Դ Ե Զ | | Հայոց լեզու | 14 | | |
| | | | 2 | Տօմար եւ կարգ Աստուածպաշտութեան. | 1 | | |
| | | | | Շաբաթական | 15 | | |
| | | | | տարեկան | | 1000 | |
| | | | | Ամսական | | 83 | 33⅓ |
| 3 | Արիստակէս վարդապետ Սեդրակեան | Ա<br>Բ | | Հայոց լեզու | 10 | | |
| | | Ա Բ | | Սրբազան պատմութիւն | 5 | | |
| | | | | Շաբաթական | 15 | | |
| | | | | տարեկան | | 1000 | |
| | | | | Ամսական | | 83 | 33⅓ |
| 4 | Ղեւոնդ վարդապետ Յովակիմեան | Ա<br>Բ Գ | | Հայկական ձայնագրութիւն | 11 | | |
| | | | | Սերտողութիւն ընդհանուր երգեցողաց | 1 | | |
| | | | | Շաբաթական | 12 | | |
| | | | | տարեկան | | 200 | |
| | | | | Ամսական | | 16 | 66⅔ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Արշակ Նահապետեան Տեսուչ | Բ | | Թուաբանութիւն. | 4 | | |
| | | Գ | | Բնական պատմութիւն | 5 | | |
| | | Ե | | Բնական Աշխարհագրութիւն | 6 | | |
| | | Զ | Ա | | | | |
| | | | Ա | Քիմիա. | 1 | | |
| | | | Բ | | | | |
| | | | | Շաբաթական | 14 | | |
| | | | | Տարեկան | | 3000 | |
| | | | | Ամսական | | 416 | 66 ⁄, |
| 6 | Ստեփանոս Պալասանեան. | Գ | Ա | | | | |
| | | Դ | | Ֆրանսիական լեզու | 16 | | |
| | | Ե | | | | | |
| | | Զ | | | | | |
| | | Ե | | Հայոց պատմութիւն | 4 | | |
| | | Զ | | | | | |
| | | | | Շաբաթական | 20 | | |
| | | | | Տարեկան | | 3000 | |
| | | | | Ամսական | | 250 | |
| 7 | Մարտիրոս Սիմէօնեան. | Ա | | | | | |
| | | Գ | | | | | |
| | | Դ | | Մաթեմատիքա | 18 | | |
| | | Ե | | | | | |
| | | Զ | | | | | |
| | | ,, | | Տիեզերագրութիւն | 2 | | |
| | | | | Շաբաթական | 20 | | |
| | | | | Տարեկան | | 2700 | |
| | | | | Ամսական | | 225 | |
| 8 | Բժիշկ Գրիգոր Տէր Գրիգորեան | Ա | | | | | |
| | | Բ | | Բնական պատմութիւն | 8 | | |
| | | Գ | | | | | |
| | | Ե | | Ֆիզիքա | 6 | | |
| | | Զ | | | | | |
| | | ,, | | Բնախօսութիւն եւ առողջապահութիւն | 2 | | |
| | | | | Շաբաթական | 16 | | |
| | | | | Տարեկան | | 2000 | |
| | | | | Ամսական | | 166 | 66 ⁄, |
| 9 | Փիլիպպոս Վարդանեան | Գ | | | | | |
| | | Դ | | Ընդհանուր Պատմութիւն | 10 | | |
| | | Ե | | | | | |
| | | Զ | | | | | |
| | | Ե | | Աշխարհագրութիւն (արտաքոյ պայմանի). | 2 | | |
| | | | Ա | Գերմաներէն | 6 | | |
| | | | Բ | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա Բ | | Ռուսաց գրականութիւն | 4 | | |
| | | Ա Բ | | Ընդհանուր գրականութիւն | 2 | | |
| | | | | Շաբաթական | 14 | | |
| | | | | Տարեկան | | 3200 | |
| | | | | Ամսական | | 266 | 66 2/3 |
| 10 | Սեդրակ Մանդինեան | Ա | | Հոգեբանութիւն եւ Տրամաբանութիւն | 6 | | |
| | | Բ | | Փիլիսոփայութիւն եւ Մանկավարժութիւն | 6 | | |
| | | | | Շաբաթական | 12 | | |
| | | | | Պարապումէ նաեւ գործնական դասերով Վաղարշապատի Ծխական դպրոցում Բ. Լսարանի աշակերտաց հետ միասին | | | |
| | | | | Տարեկան | | 4000 | |
| | | | | Ամսական | | 333 | 33 1/3 |
| 11 | Կարապետ Կոստանեան | Գ | | Հայաստանի աշխարհագրութիւն | 2 | | |
| | | Դ | | Հայոց պատմութիւն | 2 | | |
| | | Ե Զ | | Պատմութիւն Հայոց մատենագրութեան | 7 | | |
| | | » | | Հայոց Եկեղեց. պատմութիւն (առաջոյ պայմանի) | 4 | | |
| | | | Ա | Հին եւ արդի մատենագրութիւն | 5 | | |
| | | | » | Քննական քերականութիւն | 4 | | |
| | | | | Շաբաթական | 16 | | |
| | | | | Տարեկան | | 2300 | |
| | | | | Ամսական | | 191 | 66 2/3 |
| 12 | Մանվէլ Մանտարինեան | Բ Գ Դ Ե Զ | | Լեզու Ռուսաց | 20 | | |
| | | Ե | | Պատմութիւն » | 4 | | |
| | | | | Շաբաթական | 24 | | |
| | | | | Տարեկան | | 2000 | |
| | | | | Ամսական | | 166 | 66 2/3 |
| 13 | Մարտիրոս Քէրէօղլեան | Ա Բ Գ | | Գեղագրութիւն | 8 | | |
| | | | | Շաբաթական | 8 | | |
| | | | | Տարեկան | | 820 | |
| | | | | Ամսական | | 68 | 33 1/3 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14 | Բարսեղ Բասմաճեան | Ա | Ռուսաց լեզու | 5 | | |
| | | Ա Բ Գ | Ընդհ. Աշխարհագրութիւն | 7 | | |
| | | Դ | Աշխարհագրութիւն Ռուսաստ. | 2 | | |
| | | | Շաբաթական | 14 | | |
| | | | Վարժ. դպրոցի վերակացու-թեան Տարեկան | | 1200 | |
| | | | Ամսական | | 100 | |
| 15 | Աւետիք Սալիբեան | Ա Բ | Նկարչութիւն | 4 | | |
| | | Գ Դ Ե Զ | Նկարչութիւն (միայն գծի ճաշու). | 2 | | |
| | | | Շաբաթական | 6 | | |
| | | | Տարեկան | | 770 | |
| | | | Ամսական | | 64 | 16 2/3 |
| 16 | Եղիշէ Թուրինեան՝ ուսուցանէ Տաճկաց լեզու (տաճկագրագիտակաց) | | Շաբաթական | 5 | | |
| | | | Տարեկան | | 400 | |
| | | | Ամսական | | 33 | 33 1/3 |
| 17 | Ոսկան Յովհաննիսեան վերակացու եւ ուսուցիչ Պարսից լեզուի (պարսկագրագիտակաց). | | Շաբաթական | 4 | | |
| | | | Տարեկան | | 700 | |
| | | | Ամսական | | 58 | 33 1/3 |
| 18 | Արտաշէս Սուքիասեան՝ վերակացու. | | Տարեկան | | 700 | |
| | | | Ամսական | | 58 | 33 1/3 |
| 19 | Աստուածատուր Աստուածատրեան՝ վերակացու. | | Տարեկան | | 800 | |
| | | | Ամսական | | 66 | 66 2/3 |
| 20 | Աղէքսանդր Սիմէօնեան՝ վերակացու եւ օժանդակ աշակերտաց սերտողութեանց | | Տարեկան | | 1000 | |
| | | | Ամսական | | 83 | 33 1/3 |
| 21 | Գարեգին տէր Աբրահամեան՝ Թարգմանիչ եւ գործավար | | Տարեկ. | | 750 | |
| | | | Ամսական | | 62 | 50 |

1— Տէր Գրիգորեան ժամանակաւոր բժշկութեան պաշտօն եւս ունի եւ ժառանգ. դպրոցում ուսուցանում է բնական պատմութիւն 2— Թէրէօփլէննեան Վ. Խ. Հայրապետի գիւմնաստ. գրագրութեան պաշտօն եւս կրում է եւ գեղագրութիւն կ'ուսուցանէ ժառանգ. դպրոցում 3— Գ. Սաղինեանը ժառանգ. Դպրոցում կ'ուսուցանէ նկարչութիւն. 4— Գ. Աստուածատրեանը Ռուսաց լեզու եւ 5— Գ. Տ. Աբրահամեանց Ֆրանսիական լեզու։